ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՊԱՆԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

15.08.2026

Սիրելի՛ կապանցիներ

Սրտանց շնորհավորում եմ Կապանի օրվա առթիվ: Այս տոնն առանձնահատուկ ջերմությամբ է լցնում ինչպես Կապանում ապրողների, այնպես էլ աշխարհի տարբեր անկյուններում գտնվող կապանցիների սրտերը, որոնք իրենց մտքերով ու հոգով միշտ կապված են հարազատ քաղաքին:

Կապանն իր յուրահատուկ բնավորությամբ ու ամենօրյա ակտիվ կյանքով ապրող քաղաք է: Դարերի ընթացքում ձևավորված այս լեռնաշխարհի ոգին դրոշմված է քաղաքի ամեն մի անկյունում, փողոցում ու շինության մեջ: Այստեղ ծննդավայրի նկատմամբ վերաբերմունքն արտահայտվում է նրա զարգացող ներկան պահպանելու և առաջիկա տարիների համար ավելի լավ պայմաններ ստեղծելու պատասխանատվությամբ: Սյունիքի մարզկենտրոնի առաջընթացը նաև մեր ողջ մարզի տնտեսական ու հասարակական ակտիվության, ընդհանուր կայուն զարգացման կարևորագույն բաղադրիչներից է:

Վերջին տարիներին քաղաքում մեծ տեմպով կատարվող փոփոխությունները տեսանելի են տարբեր ուղղություններում: Նոր ծրագրերում, ենթակառուցվածքների բարելավման, կրթական, մշակութային և համայնքային միջավայրի զարգացմանն ուղղված աշխատանքներում առանցքային է պետական միջոցների արդյունավետ օգտագործումը: Եվ քաղաքի զարգացման համար այսօր ստեղծվող հնարավորությունները պետք է վերածվեն երկարաժամկետ արդյունքի՝ Կապանի բնակիչների համար ապահովելով ավելի հարմար, արժանապատիվ և հեռանկարային միջավայր:

Բայց քաղաքի իրական առաջընթացն, ի վերջո, չափվում է ոչ միայն իրականացված ծրագրերով, այլև մարդկանց այն վստահությամբ, որ Կապանում կարելի է ապրել, աշխատել, ստեղծել ու սեփական ծրագրերը կյանքի կոչել: Եվ այս դրական միջավայրի գլխավոր կերտողները հենց կապանցիներն են: Քաղաքը միայն շենքերն ու փողոցները չեն. քաղաքը նախևառաջ ձեր սերն է, ձեր վերաբերմունքն ու ստեղծած բարիքը:

Շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր իրենց աշխատանքով, մասնագիտական նվիրումով, նախաձեռնություններով ու քաղաքի նկատմամբ հոգատար վերաբերմունքով ամեն օր իրենց ներդրումն են ունենում մեր մարզկենտրոնի շենացման գործում:

Քաղաքային կյանքի աշխուժացումն ու նորարարական գաղափարների կենսագործումն այն ուժն են, որոնք Կապանը պետք է պահեն որպես ժամանակակից, ինքնատիպ ու կանչող քաղաք:

Այս տոնական օրը մաղթում եմ, որ Կապանի յուրաքանչյուր ընտանիքում տիրեն խաղաղությունն ու բարեկեցությունը, ավագ սերնդի համար արժանավայել կյանք ապահովվի, երեխաների և երիտասարդների համար բացվեն նոր հորիզոններ, իսկ մեր քաղաքն ունենա հետևողական զարգացում և վստահ առաջընթաց:

Տոնդ շնորհավո՛ր, իմ ու բոլորի սիրելի՛ Կապան:
Խաղաղություն, բարօրություն և լավատեսություն բոլորիդ: